Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ ԹԻՎ 75-Ն ԵՎ 77-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 75-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս, կամ համայնքի բյուջեի չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորմանը:

Որոշման դույթների համարակալումը սխալ է կատարված: Բացի այդ, որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փոփոխվող թիվը («19900000») բառերով գրառված չէ:

Թիվ 77-Ա որոշման 4-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
24.12.2021թ.